

հաղանդին՝ զոր հնչեցուցած էին Գր․ Անաւարդեցի կաթողիկոս եւ Հեթում Բ․ Թագաւոր, 1294-ի ծնադատիկին պատշաճօրէն չպաշտպանելով ազգ․ եկեղեցւոյ տեսակէտը, պատմական մանրամասնութիւններով կը ցուցնէ թէ սպառնացող այդ վտանգը իրականանալէն ետքն ալ ինչպէս պայքարը այնքան իմաստութեամբ եւ քաջութեամբ մղուեցաւ Ունիթորներու խուժումին դէմ նոյն ինքն Գլաճորի առաջնորդութեամբ, մինչեւ որ շարժումին ղեկավարութիւնը ի վերջոյ անցաւ Որոտնի եւ Տաթևի ղարոցներուն, որոնց պիտի վիճակէր վերջնական յաղթանակի պատիւը: Ապա կը ներկայացնէ Գլաճորի ղարոցին արդիւնքները՝ Հայերէնի վերա-

մշակման, առտուածարանական եւ մեկնարանական գրականութեան յառաջացման եւ առ հասարակ եկեղեցական եւ ազգային ուսմանց տեսակէտով:

Տեղեկագրի մը անձուկ սահմանը թոյլատու չէ աւելի երկարարանելու այս կարեւոր գործին մասին: Կը վերջացնենք, ըսելով թէ անոր միայն այս վերջին գլուխը, առանց այլապէս արդէն կարեւոր միւսներուն, ինքնին կ'արժէ գործն ամբողջ․ Թանկագին նպաստ մըն է մեր բանասիրական գրականութեան եւ միջնադարեան հնախօսութեան, եւ լուսարանութիւն մը Հայ եկեղեցւոյ պատմութեան ամենէն կարեւոր մէկ շրջանին, ձեռնհասութեամբ եւ հոգով գրուած:

ՔՆՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՊՐՕՅ․ Ն․ ԱԴՈՆՑԻ

Ի Մասին Տ․ Գարեգին Արքեպիսկոպիտի «Հոգեւոր Կեդրոններ եւ Գլաճորի Բարձր Դպրոցը» Ուսումնասիրութեան*

Գերապատիւ եւ Սրբազան Հայր,

Գարեգին Արքեպիսկոպոսի աշխատութիւնը, որ հաճել էիք զրկել ինձ, ստացած եմ իր ժամանակին եւ մեղապարտ եմ որ անմիջապէս Ձեզ ոչինչ չգրեցի այս մասին, չգրեցի, որովհետեւ յոյս ունէի թէ շուտով եւ հաճոյքով պիտի կարողանայի կատարել Սրբազանութեանդ պարտաւորիչ պատուէրը, մանաւանդ որ Հ․ Գարեգինի գործերը իրենց ինքնայատուկ դրոշմով ինձ մօտէն ծանօթ լինելով՝ դժուար չէր բնաւ առաջին ակնարկից եւեթ դաշտփար կազմել իւր այս նոր աշխատութեան մասին եւ արդիւնքը Ձեզ հաղորդել: Սակայն ընթացիկ հոգսերը արգիլեցին եւ միայն այժմ հնարաւորութիւն տուին աչքէ անցնել․ եւ ահա՛ ստորեւ յայտնում եմ Ձեզ տպաւորութիւններս, որոնք Ձեզ համար նորութիւն չպիտի լինին, քանի որ Հօրդ հմուտ աչքը արդէն դատած եւ կշռած է անշուշտ գործի ակնյայտնի արժանիքները:

Հայ մշակոյթի պատմութեան համար մի խոշոր նպաստ է Գարեգին Սրբազանի «Թարգմանչաց-Դուրեան» մրցանակին ներկայացուցած գործը՝ «Հոգեւոր Կեդրոններ եւ Գլաճորի Բարձր Դպրոցը»: «Սաղբակեանք կամ Պոռչեանք Հայոց Պատմութեան Մէջ» աշխատութեան շարունակութիւն լինելով հանդերձ այս գործը ինքն իրեն մի ամբողջութիւն է: Սովորական կարծիք է, որ Բագրատունեաց անկումից յետոյ Հայ կեանքը դահալիժում է եւ մտնում մի խաւար շրջան, գրեթէ կանգ է առնում դարեր շարունակ կաշկանդուած իր գործունէութեան մէջ շնորհիւ իր շուրջը բռնացող օտարոտի կարգերին: Սակայն, հակառակ այն ծանր կացութեան որ ստեղծուել էր Հայաստանում եւ

ամբողջ Առաջաւոր Ասիայում հեռուէն խուժած նոր եւ բարբարոս ժողովուրդների հեղեղումով, անուրանալի է որ Հայ կեանքը չէ մահացել: Հայ հեղ աշխատասիրութիւնը, շինարար ոգին եւ արթուն միտքը շարունակել են փալիւիւլ զանազան կենտրոններում, ինչպէս մշտապառ ճրագներ, եւ յաւէտ կենսունակութեան ապացոյցներ տուել քաղաքակրթական նորանոր ճիգերով եւ ստեղծագործութեամբ:

Արդ Գարեգին Սրբազանը նպատակ է դրել ժողովել եւ ներկայացնել այն զանձերը որ սփռուած են անլոյս համարուած դարերում, Հայ արուեստի եւ գիտութեան զանձերը՝ թաղուած փլատակների տակ եւ ձեռագիրների խորքերում: Չաքարեանների շրջանում եւ նրանց շնորհիւ երեւան են գալիս մի քանի իշխանական գերդաստաններ, որոնք յաջողում են խոհուն քաղաքականութեամբ մեղմել ահարկու բռնակալութեան թափերը եւ ստեղծել տանելի պայմաններ խաղաղ աշխատանքի համար: Պոռչեան, Օրբելեան, Դոփեան, Ջալալեան, Վաչուտեան եւ այլն տոհմերը լուսաշող աստղեր են Հայ մթին երկնակամարում, որ առաջնորդում են աշխարհաչէն եւ մտացի ոյժերը: Հայր Գարեգինը ծրագրել է պանծացնել նրանց յիշատակը յատկացնելով իւրաքանչիւրին առանձին հատոր, սկսելով Պոռչեաններից: Արցախի Խաղբակեան տոհմի մի շառուիղն են Պոռչեանք որ տիրացան ԺԲ․ դարու սկզբին Վայոց Ձորին եւ այն տեղ իշխեցին սերունդէ սերունդ մինչեւ ԺԴ․ դարը, ի դէմս Վասակի (+1224), Պոռչի (+1284), Պապաքի (+1298), Էսչի (+1317), Ամիր Հասանի (+1351), Արղութի (+1385): Այնուհետեւ յաջորդական գիծը բեկւում է, բայց տուներ չէ մարում, այլ առկայծելով հասնում է մինչեւ Իսրայէլ Օրին (+1711), Պոռչեան քաջարի տան վերջին զաւակը, եւ մեր նոր հայրենասիրութեան վերջին երազուն դէմքը:

*Տես Սիոն ամսագիր 1936 Դեկտեմբեր, էջ 366-372: